



# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆԱՈՒԹՅԱՆ

ԲՓ 0101-21

Ձեռնարկողը՝

«ՎԱՐԴԵՆԻՍԻ ՏՈՐՖ» ԲԲԸ

գ. Տորֆավան, Խաչաղյուր 1610

Գործունեությունը՝

Մասրիկի փորֆի հանքավայրի «Գիլի-1» գեղամասի  
օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների  
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման  
/ժամկետի երկարաձգում և ընդլայնում/ հաշվեդպություն  
գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պաշտոնակատար՝



Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԱՌՈՒԹՅԱՆ  
թիվ ԲՓ 0101-21  
<10> 06 2021թ.**

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ մարզի Մասրիկի տորֆի հանքավայրի «Գիլի-1»  
տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների  
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ժամկետի  
երկարաձգում և ընդլայնում/ հաշվեպահպահություն**

**Ներածական մաս.**

Ձեռնարկող՝ **«ՎԱՐԴԵՆԻՍԻ ՏՈՐՖ» ԲԲԸ**

Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, /Ա կատեգորիա/ Տեղադրման վայրը՝
-------------------	---

«ՎԱՐԴԵՆԻՍԻ ՏՈՐՖ» ԲԲ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվում է Գեղարքունիքի մարզի Մասրիկի տորֆի հանքավայրի «Գիլի-1» տեղամասի օգտակար հանածոյի (տորֆ) արդյունահանում: Նախագիծը մշակված է Ընկերության տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» <<օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. Ենթակետի, ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

**Նկարագրական մաս.**

Մասրիկի տորֆի հանքավայրի «Գիլի-1» տեղամասը գտնվում է Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի դեպի արևմուտք 3.3կմ հեռավորության վրա, ծովի մակերևույթից 1910-1920մ բարձրության վրա:

Վարչական տեսակետից, տեղամասը գտնվում է <<Գեղարքունիքի մարզի Տորֆավան համայնքի վարչական տարածքում: Հանքավայրին ամենամոտ գտնվող համայնքներն են. Վանեվան՝ հեռավորությունը կազմում է 0.45կմ, Լուսակունք՝ 2.0կմ, Տորֆավան՝ 0.58կմ, Վարդենիս՝ 3.3կմ:



Հանքավայրի հեռավորությունը Սևանա լճից կազմում է 3.98կմ, Մասրիկ գետից՝ 1.4կմ: Հանքավայրը տեղակայված է Մասրիկի լեռնային արտեզյան ավազանի միջև:

Մասրիկի հարթավայրի ամբողջ տարածքի հիմքը ներկայացված է վերին սարմատի կավային ավազաքարերով, որոնք բնորոշ են մնացուկային ծովի և տեղական ավազանի միկրոկենդանական աշխարհով:

Մասրիկի տորֆի հանքավայրն առաջացել է հնադարյան Գիլի լճի սահմաններում, որը տեղավորված է Մասրիկի գետի ավազանում: Հանքավայրը բաղկացած է 2 հիմնական տեղամասերից՝ «Գիլի» և «Վարդենիսի»: «Գիլի» տեղամասը ունի լայնությամբ ձգված էլիպսուիդի ձև, որի երկարությունը կազմում է 2.5կմ, իսկ լայնությունը տատանվում է 1.2-ից 1.5կմ սահմաններում:

Տորֆի հանքավայրն առաջացել է բուսաճակային պայմաններում՝ յուրահատուկ ռեժիմով, կենդանական աշխարհով և միկրոկենդանական աշխարհով: Վերջինին նպաստել են վեր բարձրացող աղբյուրները և գետնաջրերը՝ երկարացնելով բուսաճութան ժամանակաշրջանը:

Մասրիկի տորֆի հանքավայրի Գիլի-1 տեղամասի ժամկետի երկարածզման, ընդլայնման սահմաններում (17.375հա) օգտակար հանածոյի մնացորդային պաշարները Յ կարգով 01.01.2021թ. դրությամբ կազմում է 33402տ կամ 157556.6մ<sup>3</sup> ծավալ, որից արդյունահանվող պաշարների քանակը կազմի է 30900 տ կամ 145754.7մ<sup>3</sup>:

Սույն նախագծով նախատեսվում է հանքավայրը շահագործել բաց եղանակով, տարեկան՝ 1113.4տ կամ 5251.9մ<sup>3</sup> արտադրողականությամբ (մարվող պաշար) և տարեկան արդյունահանել 1030տ կամ 4858.5մ<sup>3</sup> ծավալ:

Մակարացման ապարները բացահանքում բացակայում է: Հանքավայրը ծածկված է, բուսական ճիմաշերտով, որոնցից մաքրելով, դրանք կտեղափոխվի մոտակայքում արդեն շահագործված տարածքի վրա ու կհարթեցվի:

Հանույթային աշխատանքները կատարվելու են բարձիչ, ավտոինքնաթափ, բուղողքը լեռնատրանսպորտային համալիրով: Արդյունահանված օգտակար հանածոյի իրացումը նախատեսվում է տեղից՝ սպառողի ավտոտրանսպորտով:

Հանքարդյունահանման աշխատանքների համար նախատեսվում է տարվա ընթացքում 130 օր, մեկ հերթափոխ՝ 8 ժամ տևողությամբ: Շառայման ժամկետը նախատեսված է 30 տարի:

Բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը.

- ամենամեծ երկարությունը՝ 408մ,
- ամենամեծ լայնությունը՝ 175մ,
- ամենամեծ խորությունը՝ 1.16մ,
- միջին խորությունը՝ 1.03մ,
- օտարման տարածքը՝ 17.375հա:

Բացահանքի անկյունային կետերի կոորդինատներն են.

1. X= 4452304 Y=8557820

2. X= 4452289 Y=8558045

3. X=4451989 Y=8558220

4. X=4451499 Y=8557945

Տորֆի արդյունահանման դաշտի մակերևույթի նախապատրաստումը իր մեջ ընդգրկում է հետևյալը.

ա) բուսական շերտի (ճմերի) հեռացում,



- բ) հանքաշերտի հերկում,
- գ) մակերևոսոյթի ողորկում (կոկում),
- դ) մակերևոսոյթի հարթեցում,
- ե) հավաքող առուների (քարտային) եզրերի կտրում:

Տորֆային դաշտը նորմալ աշխատանքային վիճակում պահելու և վերականգնելու համար պարբերաբար պետք է վերականգնվի:

Վերականգնման աշխատանքների թվին են պատկանում ջրատար առուների մաքրումը և խորացումը, կամուրջների՝ տեղադրված խողովակների անցումների վերանորոգումը և զցումը, առուների եզրերի կտրումը:

Նշված աշխատանքները կատարվում են հովիս-սեպտեմբեր ամիսներին, անձրևոտ օրերին:

Ամենամյա վերանորոգման մեջ ընդգրկված դաշտում կատարվում են հատկայի քանակի աշխատանքեր.

- հեռացող առուների խորացում (չորս տարին մեկ անգամ),
- քարտային առուների խորացում (երկու տարին մեկ անգամ),
- կամուրջների և անցումների վերանորոգում (երկու տարին մեկ անգամ),
- հեռացնող առուների մաքրում (տարին երկու անգամ),
- քարտային առուների մաքրում (տարին երկու անգամ),
- անցումների տակի խողովակների մաքրում (տարին երկու անգամ),
- առուների եզրերի կտրում (ամեն 5 ցիկլ մեկ անգամ):

Լեռնային աշխատանքների կազմակերպման և արդյունահանումն իրագործելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ աշխատանքները՝

- մոտեցող բնահողային ավտոճանապարհի կարգաբերում՝  $2100\text{m}^2$ , ծավալը կկազմի՝  $700\text{m}^3$ ,
- հավաքող առուների առվի կառուցում, միջինը տարեկան՝  $140\text{m}$  երկարությամբ ( $220\text{m}^3$ ),
- արտադրական հրապարակի՝ (մեխանիզմների կայանատեղի) կարգաբերում  $120\text{m}^2$  մակերեսով՝  $40\text{m}^3$ :

Տորֆի հանքաշերտի մշակումը նախատեսվում է կատարել ֆրեզերային (մակերեսաշերտային) եղանակով: Շահագործումը կատարվում է «քաց» քարտերի համակարգով, որոնց ծայրերը դուրս են գալիս հանքավայրի հարավային և հյուսիսային սահմանները: Քարտերի լայնությունը ընդունված է  $40\text{m}$ :

Ֆրեզերային արդյունահանման տեխնոլոգիական պրոցեսը իր մեջ ընդգրկում է.

ա) տորֆի հանքաշերտի մակերեսի (նախապատրաստված) փխրեցում (ֆրեզերացում),  
բ) փխրեցված (ֆրեզերացված) տորֆի շերտի փշրանքների շուր տալը և խառնելը, չորացնելը արագացնելու համար,

գ) տորֆի չորացված փշրանքների հավաքումը դարսակույտերի մեջ պահելու համար:

Տորֆի հանքաշերտի մակերեսի (նախապատրաստված) փխրեցումը կատարվում է տրակտորին կցված սկավառակային ցաքանի միջոցով: Փխրեցման խորությունը կազմում է  $15\text{mm}$ : Փխրեցումը սկսվում է քարտային առվի եզրից ժամացույցի սլաքի ուղղությամբ շրջանաձև, ամեն  $0.5\text{m}$  հեռացքի ժամանակ տեղափոխելով  $2$  սկավառակային ցաքանի լայնության չափով: Փխրեցումը կատարվում է  $2$  ընթացքով: Ըստ նախագծման տեխնոլոգիական նորմաների սկավառակային ցաքանի արտադրողականությունը կազմում է  $0.5 \text{t/m}^2$ :





- թունավոր խառնուրդների չեզոքացման համար դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա զտիչների տեղադրում,
- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում, որին տրվում է համապատասխան թեքություն,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուժիշացման կամ հնարավորություն ստեղծվելու դեպքում՝ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն,
- կենցաղային աղբի տեղափոխվորում մոտակա աղբահավաք կետեր,
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են նաև միջոցառումներ, ուղղված՝ աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հնարավոր ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Խախտված հողերի վերականգնում չի նախատեսվում, բացահանքի տարածքում կկատարվի ռեկրեացիոն լանդշաֆտի ստեղծում: Օգտակար հանածոյի արդյունահանումից հետո առաջացած փոսը նախատեսվում է վերածել արհեստական ջրավազանի: Կծևավորվի ափերի ուրվագիծը: Ափերն ամրացնելու և կայունացնելու նպատակով կտնկվեն ջրասեր բռյալ, թփեր, գաճաճ դեկորատիվ ծառատեսակներ: Ջրավազան կլցվեն Սևանա լճի իխտիֆառնային բնորոշ տեսակների մանրաձկներ: Ստեղծված ռեկրեացիոն լանդշաֆտը կծառայի ապրելավայր տարածքում բազմաթիվ բնադրող և չվող ջրլող թռչնատեսակների համար:

Բացահանքի հարթեցման աշխատանքներն իրականացվելու են բացահանքում արդյունահանման աշխատանքների լրիվ ավարտումից հետո: Հարթեցվելու է բացահանքի հատակը 16.8հա, մուտքային ավտոճանապարհը՝ 2100մ<sup>2</sup>: Միասին հարթեցման մակերեսը կազմում է 17.01հա: Ջրավազանի ափերի ամրացման, ծևավորման, ռեկրեացիոն ջրավազանի ստեղծման համար լրացուցիչ կծախսվի 300,0 հազար դրամ:

Ընկերությունը բացահանքում կիրականացնի շրջակա միջավայրի վրա բացահանքան ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ /մակերևության ջրեր, մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/, որոնց իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 150.0 հազ.դրամ:

Հանքավայրի շահագործումը իր դրական ազդեցությունն է ունենալու սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության իրականացման հարցում: Նախատեսվում է բացահանքում աշխատանքի մեջ ընդգրկել ազդակիր համայնքի բնակչիներին:

**Եզրափակիչ մաս.** Գեղարքունիքի մարզի Մարիկի տորֆի հանքավայրի «Գիլի-1» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» << օրենքի պահանջներով:



Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Տորֆավան համայնքում անցկացվել են չորս հանրային քննարկումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Մասնակիցների կողմից կարևորվել է հանքավայրի շահագործման ընթացքում փոշենստեցման նպատակով ջրային պարտադիր կատարումը, հանքավայրի շահագործման աշխատանքներում աշխատատեղերի ստեղծումը և Ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, պաշտպանության, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Գեղարքունիքի մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց կողմից ներկայացված կարծիքներն ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

**ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման դեպքում, գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:**

### Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել.

- << կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
- << կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
- << աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխի պահանջներով՝ աշխատողների անվտանգության և առողջության ապահովում:

2. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել.

- ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերի և բնապահպանական պահանջների



կատարումը և Տորֆավան համայնքում Ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:

- Բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՐԴԵՆԻՍԻ ՏՈՐՖ» ԲԲ ընկերության կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Մասրիկի տորֆի հանքավայրի «Գիլի-1» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ժամկետի երկարաձգում և ընդլայնում) աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Մ. Ավետիսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Խ. Մարտիրոսյան

Ընդամենը՝ 7 էջ: